

Գ. Ա. Ղ. Թ. Ա. Կ. Ա. Ն. Կ.

ՀԱՅՈՑ

1951



Գ. Ր. Ն. Յ.

ԵՍՍՍԻ ՎԱՐԴԱՊԵՏ ՂԵԻՕՆԴԵԱՆ
ԱՊԱՀՈՒՆԵԱՅ



Գ. Ո. Ր. Ե. Ա.

ԾՈՂԱՎԱՐԿԱԾԻՐ ԲՆՆԵՐ ՊԱՂԱՅՈՒ



Արագս ցուրտէ :

Քու պղտոր ալիքը :

Զուր տուր որ լուանք :

Մեր արնատ չապիկը :




ՅՈՒՅԱՆԴՆՈՒՊԵՂԱՅ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԽՕՃԱՍԱՐԵԱՆ

Գ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ք

Հ Ա Յ Ո Ց



Գ Ր Ե Ց

ԵՍԱՑԻ ՎԱՐԴԱՊԵՏ ՂԵԻՕՆԴԵԱՆ
ԱՊԱՀՈՒՆԵԱՅ

Յ Ե Ց Ո Ր



Գ Ո Ր Ծ Ա

ԺՈՂՈՎՐԴԱՍԷՐ ԸՆՆԵՐ ՊԱՂԱՅՈՐ



Արագ օ դուրսի,
Գու պղտոր ալիքը:
Զուր տուր որ լուանք,
Մեր արնոտ շապիկը:



ՆՈՍՏԱՆԳՆԵՐՊՈՒԽ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ ԽՕՀԱՍՄԱՐԵԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Խ 195

Ա. Զ. Դ.

Այն փոքրիկ պատմութիւն՝ մեր հայրենակից Հայ գաղթականաց կրած աղէտից ճիշդ նկարագիրն է, որոյ տողերը աղի արտասրտաց մէկ մէկ պղտոր ագրեքակներ են այն սրտերուն համար. որոնք Հայութեան սուրբ սիրոյ զգացումներ կը կրեն :

Սուրն և սովն շատ հեղ 'ի սաստ հարուածեր են զՀայաստան, սակայն չ'են կարողացեր Հայ ազգի սիրտն ու սէրը խալալ խել կտրել Հայոց ազնիւ աշխարհէն. «օտար հողն զՀայն խր կեանքէն կը զրկէ. Հայն միայն 'ի Հայաստանն կարող է իրեն ոգւոյ ազատութեան չունալը չնչել. . . » :

Հայ եղբայրք, ընդունեցէ՛ք մեր այս դոյզն երկասիրութիւն, զոր Ձեզ կ'ընծայեմ. . . : Թո՛ղ Ձեր սրտի աղնուութիւնը կանգնի կոթող մշտնջենաւոր այն քաջ նահատակաց յիմին վերայ, որոնք Հօրաց կրճի գազաթը կեցած կենդանի վկայ են Հայոց քաջութեան, զխտելով զերկնահամբոյր լեառն Մասեաց և գդալտն Արարատեան, զոր մեր 'վեհ՝ Նախնւոյն անունը երբեմն պատկէր զգոյն :

Գ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ք

Հ Ա Յ Ո Ց



ԴԼՈՒԽ Ա.

ԻՄ քուն հայրենիք Ապահայ գաւառն է,
Լիզ գիւղի մէջ ծնած եմ եւ իմ մօրէն (1858
Յուլիսի 17ին) : Անդ թաղուած կան 'ի հողը'
իմ նախնիքը . Լիզ գիւղի արեւմտից հիւսիսուց
կողմն , Սաղով աղբիւրի գլուխ , Խորուտ ձորու
ճամբուն մէջ տեղը :

Հօրս անուն Յակոբ էր՝ ու մօրս Արան ,
որոց անդրանիկն եւ եմ . հայրս և մայրս խիտ
սիրով էին միմեանց հետ . իրենց ամուսնական
պարզ սիրոյ մէջ չ'կար երբէ՛ք ո'չ կեղծ հաճու-
թիւն և ո'չ մի չղջորթի համրոյր . այլ սուրբ
զգացմամբ մի սիրտ և մի մօրմին էին այս ան-
մեղ զոյգ լծակիցք :

Հայրս ո'չ շատ ընչեղ և ո'չ շատ աղքատ .
այլ միջին կարգի երկրագործ մարդ մի էր , ին-
քրն իր վիճակէն գոհ մէկն , որ շատ որբոց և
տնանիքոց ալ խնամք կը տանէր իր զթոտ խըղճ-
մրտանօք . մինչ դեռ դարուս մէջ շատ հարուստ
ներ կան , որ իրենց տան գոնեքը աղքատին

դիմաց կը փակեն և չե՛ն ուզեր իրենց տաշտէն
բեկոր մը հաց անոնց բաժին տալ :

ԳԼՈՒԽ Բ.

Նրազի պէս միտքս կուգայ , սաստիկ սով
մը տեղաց մեր աշխարհը , տեղացի Հայ ժողո-
վուրդը հացը չ'գտնելով սկսեցին կանկար և ա-
ւելուկ խոտերու սերմերն երկանով աղալ և ու-
տել :

Արդ փորձառու Հայերը՝ տեսնելով որ ալ
կարօղ չ'են դիմանալ սովին , որ հրեղէն սուրի
պէս աջ և ահեակ կտրելով կը կտտօրէր իրենց
ազգակից եղբարցը , միաձայն հառանութեամբ
յորդոր կարգացին Հայ օրերոյն թէ :

Պէտք է որ կարօղութեան տէր մարդիկը
մէկ մէկ գրաստ առնեն , և իրենց կաշ կարասի-
քը անոնց վրայ բառնան , երկրէն դուրս ելնան .
և շննան այն տեղերը սովամահ մեռնին :

Ուստի հետ գհեալ սկսեցին գաղթել , գաղ-
թողներէն ոմանք ալ մէկ մէկ աղքատիկ այր և
կին իրենց հետն առին . իրենց հացէն նոցա
բաժինը հանեցին , և յողրս հարան արտառուաց՝
թո՛ղ տալով իրենց տուններ տեղերը և գէպ 'ի
Արարատեան աշխարհը գաղթել :

ԳԼՈՒԽ Գ.

Գաղթելոց թիւն տասն հազար տան կը

Հասնէր , որք յետագայ գաւառներէն էին , Սասունաց , Խուժայ , Բղնունեաց , Խլաժայ , Հացեաց , Հաշտենից , Հարքայ , Ապահունեաց , Խընուսայ , և շատ մը ուրիշ տեղերէ . որոնք խումբ խումբ բաժնուած՝ կարդաւ մէկ մէկի ետեւէ իրենց դէմքը դէպ 'ի արեւելքը ուղղելով կ'երթային . որոց հետ էինք և մենք :

Մայրս մեր տան դրան առաջ ձին հեծաւ , որուն վրայ բարձած էինք մեր կահ կարասիքը . և զիս իր գիրկն առաւ : Հայրս ալ մեր անասունները իրեն առջևը ձգեց . թո՛ղ տունիք մեր տունը ամայի . և լալտ աչօք մեկնեցանք :

ԳԼՈՒԽ Դ .

Տարի կէս սովը տեւեց՝ (1842 սեպտեմբեր 25) ին էր , երբ մեր գիւղացիքը գիւղի դիմաց Հրանտ դեափ եզրը ջոկ կարաւան մը կազմելով ճամբայ ելան . ճիճ , աղաղակը , ողբ և արտասուքը մարդուս սիրտը կը ճմլէին :

Մեր գիւղացի Հայ աղջկունք՝ իրենց գլխի շէկիկ հերքը փետելով , ճամբու այս կողմն և այն կողմն բուսած վարդենեաց ճիւղերէն կը կապէին 'ի նշան սիրոյ և կրկին դարձին . քանզի սոքա թէ և առ հարկի սովոյն ստիպեցան օտար երկիրները գաղթել :

Սակայն իրենց սիրտ ու միտքը անբաժկ կապուած էր այն մայրենի աշխարհին հետ , որոյ գիրկը ծնած և սնած էին իրենք , կը սիրէին

սրտի մտօք այն սուրբ հողը , յորոյ վերայ ըյս արեւ տեսին իրենց աչքը :

Մեր կարաւանը հետ զհետէ առաջանալ ըսկըսաւ մինչ գիւղը • խաղառ մեր աչքէն անհետացաւ , արեւը կապոյտ երկնից մէջ տեղը հասած տաստիմ տօթ մը կար այս միջոց , երբ թանձրը մչուչ մը մեր դաշտավայր երկրին երեսը բռնած կը սլատէր :

ՓԼՈՒԽ Ե .

Մեր առաջ գնացող գաղթեալ մարդոցմէն շատ մը այր և կիներ՝ անօթնէ քայլ մը փոխելու կարօղութիւնը չ'մնալով նոցա ծռնկները , թուլցած ընկած էին ճամբուն մէջ տեղը :

Ասոնք այն աղետալի յետին տաղնասլին մէջն էին , որ մարդս արմատէն կտրած ծաղկի պէս գունաթափ եղած կը թառամի , և 'ի վերջին վիշտս կը հեծէ ցաւօք սրտի իր շունչ արձակել , քանզի նորա կենաց արեւը կը մոնայ :

Արդ այս աղետալի դէպքը տեսնողներէ սիրաբ 'ի դուք շարժեց , որով երբ Զրւանայ տապանը հասանք , բեռները մօտակայ աղբիւրին ղրուիւր դրեցինք • կարաւանը այն տեղը նիստ ըրաւ :

Կտրիճ տղամարդիկը յետ դարձան ճամբու հետ մեռածները թաղել , և կանայքն ալ յարտասուս փղծկելով՝ նստան կոծել իրենց անձինքը համակեալ 'ի սուգ թախմութեան :

ԳԼՈՒԽ Զ .

Երբ տեսայ՝ որ մայրս ալ նոյն կանանց հետ
աղէկէզ սրտիւ կը մաղկտար և կու լայր , ես ալ
սաստիկ ճիճ մը բարձի , և սկսայ լալ , սոյնալէս
որ ալ ուրիշ կերպով մը հնար չեղաւ ձայնս կըտ-
րել մինչև որ . . .

Մայրս նստած տեղէն վեր ելաւ . ձեռքս
բռնեց , աղբիւրի գլուխը գնացինք , նա զով
ջրով երեսս լուաց , և սրբեց զայն իր արտասուօք
թրջած թաշկինակաւ :

Ետքը իմ ծնօտքը իր քնքուշ ձեռքերուն մէջ
ամփոփեց , գլուխս վեր վերցուց և կաթոգին
սիրով մը իմ երկուց այտից երկու անմահ համ-
բայր դրօշմեց և ըսաւ :

Արևիգ մատաղ կը լինիմ իմ հոգւոյ կտոր
և ծոցիս ծաղիկ , դեռ մայրդ մեռած չ'է՝ որ
դու կուլաս , մի՛ լա՛ր աչքիս լոյս մի՛ լա՛ր , ա՛ռ
քեզ ծիծը . ահա՛ մօրդ քաղցր կաթը , անո՛ւշ
անո՛ւշ ծըծէ , և հանգիստ գիրկս քնացի՛ր :

Այս խօսքերը սսած միջոց տեսայ որ՝ մօրս
աչքերէն երկու կաթ արտասուքը գլորելով ե-
րեսիս վրայ անկան , զոր ցարգ կը յիշեմ և ա-
ղիքս կը գտնուրին . . . :

« Երախտագէտ որդւոյ մը համար իր մօր
աչքերէն թափած մի՞ կաթ արտասուքը սուր
սլաք է իրեն՝ սրտին երբ զայն կը յիշէ իր միայ-
նութեան մէջ » :

Մօլա գիրկը քնացեր էի . երբ խլրտաց մայրս և տեղէն վեր ելաւ , սթափելով քնից արթընցայ . տեսայ որ հացրս և մայրս միասին մեր բնակեալէն քիչ մը հեռի դարի մը կողը տալով դէպ 'ի վեր կ'ելնեն , վազք ինչ առաջ երթալով կանգ առին . . . :

Մեղինից քանի մը քայլ անգին առոյգ հասակաւ կին մը քօղը իրեն երեսին քաշած քիչ խտտերով ծածկեալ ծիւ քարի մը իր մէջքը տալով անշարժ թիկնած կ'երեւէր :

Վեցամեայ գրկանոց մանկիկ մ'ալ անոր գիրկը մտած ողջ դէմքը իրեն մօր երկու ըստէ անց մէջ թաղելով յրալէս թէ կաթն կը դիւէր :

Այս գթառիթ երեւոյթը մօրս սիրտը շարժեց . որով վազեց դնաց խեղճ կնոջ երեսի քօղը վեր առաւ . անոր ձեռքը բռնեց , և ջած ձայնով մը կանչեց :

Քոյր ի՛մ , քոյր ի՛մ , ելի՛ր ելի՛ր . ահա՛ որքեր մտաւ , ոչէ՛ այս տեղը մինակ մնալ աղէկ չէ՛ . ելի՛ր երթա՛նք , մենք զքեզ մեղի հետ կը տանինք :

Մայրս ողորմելի կնոջ թեւը թռ'ղ տալով ձեռքը նորա ստաւած կուրծքին տարաւ , և այն տեղէն ալ փոխելով իր ճկոյտը մատաղ երախայի բերանը դրեց . . .

Այն ինչ տեսաւ որ մանկան հագաղն և շնչառութիւնն ալ դադրած են , 'ի նոյն զղաց

որ երկուքն ալ մեռած են :

Ուստի աչքերը արտասուօք լցուած սոսկ...
լով մը մայրս յետ դարձաւ , սուր տկնարկ մը
ինձ վրայ ձգեց , և ապո՛ւշ կերպով մը հօրս ե-
րեսը նայելով ըսաւ :

Մա՛րդ Աստուած մեր մեղքը մեր երեսը
չ'զարնէ . . . երանի՛ տղային որ իր մօր գիրկը
գարձեր է իրեն գերեզման . քալե՛ մարդ քալե՛
մի՛ կանգնիր մեռածները թաղել պէտք է :

ԳԼՈՒԽ Ը .

Հօրս և մօրս հետ միասին մեր բնակեցողը
գարձանք , հայրս քանի մը մարդ իր հետն ա-
ւաւ , անօթնէ մեռնող խեղճ կիներ և նորա օրս
դին թաղել գնաց :

Իսկ մայրս ալ զիս գիրկը տռած տղրիւրի
զլուխն երթալով գալով անմուռնչ կը հեծէր ,
և գի՛ւ գի՛ւ արտասուքը իրեն աչքերէն կը թա-
փէին :

Հայրս եկաւ , արևն ալ մոտաւ , այս հողա-
գունդ մթութեան խտիար թաղելով մեր երկ-
րին երեսը համատարած խաւար մը պատեց :

Փայլուն աստղերը Հայաստանի բարձրակա-
մար երկնից խորութեան մէջ դոյն զգոյն փայ-
լակն արձակելով կը շողջողէին :

Երբ մահաբեր սովի սրով հարւած խուժ-
մը խեղճ Հայ ազգիք , խաղառ շունչ կտրած Քե-
նայ լեռան սև քարերուն ողնելով արտասուաց
հեղեղի մէջ կը խեղդուէին աղաղակելով :

Աստուած զմեզ ազատէ՝ Աստուած . կամ
հաց տո՛ւր կամ խմած . սովը մեր մէջքը կտորեց,
ստրի վրայ կարող չենք կանգնիլ, մեր զօրութիւն
նը հատաւ :



ԳԼՈՒԽ Թ.

Գիշերը սգով անցաւ , բարի լոյսը բացաւ ,
մայրս զիս քնից հանեց , ձեռքս բռնեց , աղբիւրի
դուխը գնացինք , երեսս լուաց և զիս իր հետ
ստաւ . քիչ մը առաջ երթալով բարձր քարի մը
ընթերը հասինք :

Մայրս իր երեսը դէպ 'ի աղօթարան ուղ-
ղելով ըսաւ ինձ , ձեռքերդ վեր վերցուր և ին-
քն աղօթել սկսաւ :

Օրհնեա՛լ ես բարի լուսոյ Աստուած , Օրհնեա՛լ
է քու նախախնամ էութիւնը , Օրհնեա՛լ ես
լոյս և մութն ընող Աստուած . Քու աջ աջը
թո՛ղ մեր գլխու վրայ վնի . Օրհնեալ ես Աստը
ւած քու անհուն սիրոյ համար թո՛ղ եղնի ,
դու իմ գլխաւորը Ամէն չար վարձանքէն ա-
զատ պահէ , Աստուած դու զիմ հոգին անոր
գիրկն առնես , թո՛ղ ես նորա ստից տակը մեռ-
նիմ . Ծովի և ցամաքի Աստուած , լոյս և ճար
ընող Աստուած , բա՛ց մեր դէմ քու անհուն ու
գործութեան դուռները , մեր յոյս և ապաւէն
դու ես Աստուած , մատաղ երախայիս զմեզ
խնայէ՛ Աստուած , որոյ ձեռքերը բռնելով քու
գլխութեան գիրկը կը դիմենք , փա՛ռք քեզ լու-

բերար Աստուած , դու ամէն աղքատին և տը-
նանկին ողորմիս ինչպէս որ մեզ ալ Աստուած ,
փա՛ռք քեզ երէսց թռչնոց և ամէն կից Աստու-
ած , գոհանալով զքէն և քու տանէն , թո՛ղ
քու բարի կամքն եղնի , ինչ որ դու կամիս
Աստուած , քեզ միայն փա՛ռք վայելէս ամէն :

ԳԼՈՒԽ Ժ .

Մայրս իւր սրտառուչ աղօթքը աւարտեց ,
յետ դարձանք , և մեր կա՛հ կարասիքը ձիւ
փրան բարձանք ու ճամբայ ելանք . . . :

Արեւը նոր պուաւ , շողը Սուր սարի գլուխը
զարկեց , մինչդեռ մենք մօտակայ լեռանց հու-
րան ու ցուրանը կտրելով կ'անցնէինք ձորերու
մէջէն մնայք բարեաւ (1) ասելով :

Հայ թռչունն ալ իր աչքերը արցունքով
լցւած , լեռնէն իջաւ մեր դիմաց երթա՛յք բար-
եաւ ասելու . երգե՛ց հեծեց և խոյս տալով խո-
տերու մէջ ողբ 'ի բերան (2) կրկին դարձ էառ
իր ըոյնը սգալ Հարք գաւառի ամայի մնացած
սար ու ձորեր դաշտ ու հովիտները :

Սուր սարի թեւէն վայր իջանք , Եփրատ գե-
տոյն անդին անցանք , Նոր Աղեւնայ ախոն ,
սովիտակ աղբիւրի գլուխը բեռներ դրեցինք
հանդ տունելու :

ԳԼՈՒԽ ԺԱՅ.

Անդ աղբիւրի թումբը բուռած վարդենեաց բոյլերէն կարմիր մեծ օձ մը դուրս ելաւ . յանկարծ ութամեայ փոքր տղայի մը վրայ արձակելով կայծակի պէս զարկեց զայն գետին փռեց , և ինքը սողալով փախչել սկսաւ :

Խարտեաչ մազերով , և առոյգ հասակաւ , տասներեքամեայ Մթխալ անուն Հայ աղջիկ մը տեսնելով այս մահաուիթ աղէտը , վեհ շարունակեալ խորամանկ օձու ետեւէն վազեց հասաւ , և թեղի փայտով մը օձու գլխուն և մէջքին զարնելով սպաննեց զայն :

Մթխալը օձ սպանելէն ետք օձու եղջերքը փրցուց իր ծոցը գրեց 'ի վարձ իւր քաջութեան , և ահագին օձու տուտէն բռնելով չիչխան հաստ ծառի մը ճիւղին վրայձգեց զայն 'ի տես (Ճ) ամէնից :

Արդ Մթխալը գովեստ քաջութեան ժառանգեց (Ա) և օձահար պատանին մէկ ժամէն ետք հեղձամիճուկ վնեւելով մեռաւ (Յ) որոյ մարմինը սպիտակ աղբիւրի գլուխը թաղեցին , և տեղւոյն անունը փոխելով օձահարի աղբիւր դրեցին մինչև ցայսօր :

ԳԼՈՒԽ ԺԲ.

Մինչ 'ի մուտ Արեւին այն տեղը մնացինք ուր կտրիճ տղայք Եփրատ գետէն ձուկը որսալով մեզի բերին եղով տապկեցինք կերանք :

Կանայք ալ մինչ միմեկի հայր Կոզեցին լը-
րացան, երբ լուսին Սիմ լեռան Կոզէն իր բո-
լոր երեսը գուրս հանեց բեռները բարձանք,
և հով գիշերով ճամբայ ելանք:

Այն կերպ խոր լուսթեամբ մը ճափան
կերթայինք, որ գիշերային թովիչ թմրութիւն մը
մարդկեղէն բնութեան վրան թափելով 'ի քուն
քաղցր կ'ամօքէ զայն:

Լուսին հետ գէտէ վեր կ'ելնէր գէտ 'ի
Հայոց սլարդ երկնից ճակատը, աստղերը նորա
ոսկեգոյն լուսոյն մէջ կը սլաղային իրբև գիտյ-
շուն անդամանդ:

ԳԼՈՒԽ ԺԳ

Անտառախիտ խոր ձորի մը միջէն կ'երթա-
յինք, աստի և անտի բարձրաբերձ ժայռերու
տակէն կարկաչաձայն առուակները հոսելով սը-
րընթաց գետակ մը կը կազմէին, որ լուսնին շու-
ղով 'ի ժպիտ գէմս կը սահէր ու կ'անցնէր:

Այս զով գիշերին մէջ ուրիշ ձայն մը չ'էր
լսուեր. միայն Սոխակ թռչնոյն սրտառուչ հրճ-
ծիւնը բարձր և խիտ առ խիտ եղած կազմա-
խեաց միջէն մերթ կ'ելնէր, զոր Հիւսիսային
հովը մեր ահանջին կ'ընջէր:

Թուի թէ խեղճ թռչունն ալ երազին մէջ
վարդ տեսներով զբաղած էր զայն սիրաբանել:
(8) « Զիք ինչ ազդ մեկդի գերծ 'ի հոգւոց:

Տակաւին մեր կարաւանը սար ու ձորը կը

էտրէր ու կ'անցնէր , այն ինչ թռչունները հա-
մահոյլ կը սկսէին 'ի նուազ օրհնութեանն փա-
ռարանել զընութեանն Աստուածը , որ 'ի քաղ-
ցըր ակնարկս զայս տիեզերքը կը նախախնամէ :

ԳԼՈՒԽ ԺԴ.

Մօրս գիրկը քնացեր էի , շատ և քիչ եր
թալը չգիտեմ , քանզի Մարդ որ կայ անթե-
հաւքէ » կ'ըսէ առած մը : Արեւ ծագիւր էր ,
մայրս գիւ կը կանչէր :

Ելի՛ր ելի՛ր տե՛ս թէ ո՛ւր հասանք :

Երկայն եւ լայն դաշտի մը մէջ տեղը հասեր
էինք , այն տեղէն մայրս Արեւելից հիւսիսոյ
կողմն կըր ու բարձր սար մը ինձ ցոյց տուաւ
մատով :

Աղա՛հ արեւիդ մատաղ , կը տեսնես է՛ հա
Սուղաւէտ է այն բարձր սարին անունը , սուրբ
կայ այն տեղը , սուրբը քու սրտի փափաղը լե-
ցընէ , իմ անո՞ւշ որդի , իջիր փոքր ինչ քաղնք
որ հանդիսնք :

Զիէն վայր իջանք , մայրս ձեռքս բռներ կու-
նուղ հողի վրայ հետիտտ ուշի՛կ ուշի՛կ կ'եր-
թայինք . « Պարզ կացութեան մէջ սէրը կը շո-
ղայ » :

Ես խօհ էի այս անմեղ զոյգ էակաց սիրոյ
և համակրութեան միակ առարկան , քանզի երբ
իմ վրայ իրենց աչքը կը յառէին փոխոխ դըր-
հախառնութեամբ մը 'ի նոյն միմեանց սէր կը

հաղորդէին . և երկնային ժպիտ մը անօնց երևա-
սին վրայ կը ծառաէր :

ԳԼՈՒԽ ԺԵ .

Ահա՛ սցառէս խինդ 'ի սիրտ երթալով ,
մութ մառա Սուգայ սարի տակը հասանք , մեր
բռնները այն բարձր ժայռին առաջ դրեցինք զոր
Սակի սեղան կը կոչեն :

Ճզած քարէն սառն ջուր գլգլալով կը հոս-
տէր , և ուր մուր վերէն վար կը սողար ու
կ'երթար ժայռի առջին եղած ծառախիտ սլու-
րակին ծոցը կ'անհետէր :

Մինչդեռ արքը կ'դառնէին տեղը չինել , և
կանայքն ալ կոճղ կը թողնէին որ դիշեր ցրտոյն
կրակը վառեն . Սուգայ սարի կողը ոչխար ա-
րածող հովիւք սկսեցին 'ի դոյն Ասորայ (1) սու-
լել զօրինդ որոց քաղցր ձայնը քարերն ու թփեր
'ի լաց կը շարժէր :

Պահ մը անցաւ , հետեւեալ երգն ալ մեր
Հայ աղջիկները սկսեցին ասլել 'ի ծոց դիշերացին
լառթեան , անձառներ ձայն տալով թմրութեան
սարսափ մը մեր վրայ կը թափէին :

Ե Ր Գ

« Լուսին էր Աւաղ լուսին ,

« Գիշերը կ'երթար Անհտին ,

« Կ'երթար վեր ՀԱՆԻՈՐ ՍԱՐԻՆ ,

- « Գրութիւն դնել Սնեդ Էին , . . . »
- « Աստղիկ Այդին էր խոր քուն ,
- « Յըծեքը բացեր դէմ աստեղնուն :
- « Յըծեքու մէջ կայր մի նշան :
- « Գճկայ որ պաղեմ՝ զնշան :
- « Զիտ տարաւ սէր Աստղիան ,
- « Գլորայ անկայ 'ի Զնտան :

ԳԼՈՒԽ ԺԶ.

Դա է Ադին (1) Սարի ձախ թևի տակէն լուսին դուրս ելաւ : Դար ու դաշտ դեպին լոյս մը գգեցաւ , երկնից աստղերը վերէն կը ողջոյճաւ յին , սարերն ու ձորերն ալ վարէն լուսնին շուրջ կը ժպտէին , և զովադին հով մը կ'ընչէր :

Գիշերը կէսն եղաւ Սուգոյ սարի տակէն ճամբայ ելանք : Լուսին որ երկնից օդին սպառազութեան մէջ կը լողար ու կը թաւալէր խանդավառ կաթ սիրով հայոց յԱհ լեռանց ճակատին իր ու գեշարժ համբոյրը կնքէր :

Այն ալ իւր մշտաառ չրջան աւարտեց և 'ի դոյն վարդի շիկնելով վաւթաց իր հարսնութեան առաջատուը մտնել , և հեղեղ բնոյն զիտ բարձեալ տարաւ :

ԳԼՈՒԽ ԺԷ.

Հինգ օրը գէտ 'ի Արեւելքը գնալով Մասնայ սարի օջ թևը Զօրայ Աիրճը հասեր էինք ,

Քնից ելայ տեսայ որ մայրս զիս գրկած ձիուն վրան նստած խոր ձորի մէ միջէն կ'անցնէինք :

Միջօրէ էր ։ մայրս կտոր մը հացի վրայ կուգտ. կողի դրեց ։ և խնձ տուաւ կ'ուտէի ։ յանկարծ երկու հեղ հրացանի ձայն ելաւ ։ և մեր առջին գնացող մարդոց մէջ սաստիկ աղմուկ մը ձգեց ։ որով արհուլիք մը զմեզ կը սլատէր ։

Սոյն միջոց սարի կողէն չորս հարիւր զինուաւ Մեգացի ասպատակք ձայն տալով մեր վրայ գլխակցին ։ որոնք 'ի բացուստ անտի կը հայհոյէին ։ մահ կը սպառնային ։ և գայլի պէս վերէն վայրը կը վազէին ։ խեղճ անդէն հայերը սուրի բերնէ անցնել և նոցա ինչք կողոպտել ։

Երգ երբ հայերը տեսան որ չ'է կարելի առանց արեան հաղաղեաց այն մութալուտ վտանգէն զերծանիլ և ազատ մնալ ։ որոշեցին 'ի նոյն արիութեամբ մեռնիլ ։ քան թէ վատութեամբ մատնել զիրենքը սցնալիս ։ չար Քաղանաց ։ զոր 'ի վաղուց անտի քաջ գիտէին ։ և որոց անգրթութեան չ'էին ինչ անտեղեակ ։

Սուտի թէ արբ և թէ կանայք մէկէն դուրս շեղան ուղիէն և գրո'հ տալով ձորէն անդին բարակրձ բլրոց մը գագաթն ելան ։ կանայք և մոնկտիք զմիջին կալան դտեղին ։ և արբը գտնոք իրիւ ամուր պարիտով շուրջ փակելով սկստան Մեգաց գէմ դնել ։ և քաջութեամբ կռիւլ անոնց հետ 'ի նմին տեղւոջն ։

ԳԼՈՒԽ ԺԸ .

Կռիւր տագցաւ , մեր քաջ Հայոց չորս կողմէն ձգած քարանց ահեղ հոնդիւնը զբլուրն զայն ամրութեան 'ի թունդ կը հոնէր . կանայք քարը կը կրէին , և արք զմեզս սլարսիւք սաստիկ կը կոծէին :

Մեզաց զխակունքը ստորակայ հովիտին ծոցը տապաւառ անկած արեան մէջ կը լողային , ոմանց գլուխը , ոմանց թեք , և ոմանց սրունք կարած դետին ինկած կը թրթփային կարթապալ ձկանց նման :

Իսկ Մեզաց ձգած զնտակներ կարկտի նման մեր բրդաձև խմբին մէջը կը տեղային , սիրտս կը արօրի յիշել այն տխուր ժամ , յորում հայերէն տմանք զնդակի հարուած կրելով 'ի կուրծ և 'ի կուշտ յարտեան բլրոյն անկած յարեան կ'ողողէին :

Երեք ժամ տեւեց այս դու Մարտը հուսկ իմն Հայքը տարան զյաղթանակ , բան զի այս հեզը քաջ հայեր թէ՛ արք և թէ՛ կանայք մեր կեցած բլրոյն գլուխէն յորդ հեղեղի սկս վայր հեղան , և միաբան ձայն բարձին :

Հա՞՞ վախտան հա՛ , թո՛ղ մի՛ տայք , սլարսեցէ՛ք , չուրջ վախէ՛ք , տապարէ՛ք . մի՛ խնայէք , մէջ առէ՛ք , հա՞՞ մէջ առէ՛ք , սուր գերանդեաւ բրդէ՛ք գետինը թաղէք :

Հայեր իրենց սուրերը վայլտիկ նման կը

խաղցնէին , և արեան հեղեղը հովիտի ծոցէն գետորէն կը խաղար : Ահա չորս դարեր կ'անցնին հազիւ թէ բազդը կ'օգնէ հայոց . Մասիս իրեն տրամութեան քողը վեր կ'առնու ¹ իր ակնարկ դէպ 'ի հզօրաց կիրճը դարձնելով՝ Հայնահատահայ քաջութիւնը կը տեսնայ , և 'ի ժըպիտ դէմն կը ցնծայ :

Այս առաջին անգամն էր որ Մեղացիքը Հայոց քաջութեան փորձը առին . անձն ոք 'ի նոցանէ զէնընկէց լինելով յետս ընդ կրօնին կը փախչէր հայեր զհետ նոցին մտած սաստիկ սրտամտութեամբ կը կոտորէին զանոնք անխնայ :

ԳԼՈՒԽ ԺԹ.

Մեղացիք ցիր ու ցան եղան , մենք բլրոյն դադարէն վայր իջանք , ութ Մեղաց զլուխը կտրած ձորի մէջ Ուռի ծառերի տակ ձգած տեսի , որոց վզէն թուխ արիւն վաղերով հայոց սուրբ հողը կը պղծէր , դեռ արեան ջերմ շողիւր բա՛լ բա՛լ վեր կ'ելնէին :

Անցանք փոքր ինչ առաջ Արուսն անուն Հայ մ'ալ սիրտ քարի մը թիկնած արեան մէջ կը ծփար և կը մռնչէր :

Ա՛հ , ա՛հ սիրտս կ'այրի հասէք ինձ . . . աչքերս միմեց . . . Արեւը մտաւ . . . ա՛հ , ա՛հ . . . :

Մեղաց ետեէն պնդող քաջ հայերը այս սարի զլուխէն այն ձորի միջէն դուրս ելան , և

հրկին մէկ տեղը գալով վաղ ընդ փայթ վեց գրրու-
կաչտի լայնութեամբ խոր հոր մը փորեցին , և
Հայ նահապտակաց մարմինը իրենց արնոտ չորե-
քով այն տեղը ամփոփեցին 'ի հող փութիս , և 'ի
սուգ տրտմութեան ճամբայ ելան :

Միարան կ'ողբային և հոծելով իրենց հերքը
կը ճողէին կ'լային կ'մաղկտային և կ'ըսէին :

Ա՛հ , եքանի՜ թէ մեր տեղը մնայինք , թո՛ղ
սովը զմեզ մէկ հեզ կտաօրէր , և ո՛չ թէ այսպէս
անմարդէի սարերին դուխը գալով անգութ Մե-
զաց ազգը մեզի հետ 'ի գէն և 'ի սուր մարտը
մղէր : Ա՛հ անիծեալ նոքա որք զլացան Հայ
ազգին 'ի գործ դնել զՍուր և զՍուին ընդ գէմ
անխղճ թշնամեացն , որք 'ի դէս ժամու սպա-
սեն հեղուլ զարիւն անմեղին :

Սբդ հայոց կողմէն անկած Նահապտակաց
թիւը ընդ ամէն հարիւր ինն հոգի էին թէ՛ սցր
թէ՛ կին թէ՛ տղայ և թէ՛ աղջիկը . այլ Մեզոց
ազգէն 400 էն յիսունը չորս հոգիքը մաղապուր
զերծան , իսկ մնացորդքը ընդ ամէն 'ի նմին
տեղւոջ 'ի սէր , , , զոհ եղան , և Հուրեաց
գիրկը փոխվեցան :

ԳԼՈՒԽ Ի .

Արևը մայր մտաւ , ձորէն դուրս ելանք ,
Մասեաց սարի ձիւնապատ գաղաթն երեաց ,
քաջ հայերը սիրտ սուին և հողի , մէկ միւսին
մատով ցոյց կուտար , և ձայն բարձին միտաին :

Ահա՛, ահա՛ երևաց Մասիսն աղատեցա՛նք,
աղատեցա՛նք ջրհեղեղէն և արեան հեղեղէն, և
սիրոյ ու խնդութեան արտասուքը նոցա աչքե-
րէն ցողեցին :

Գ Ա Ղ Թ Ա Կ Ա Ն Ք

- * Ա՛հ ս Ա՛հ ս ա՛ռ դիւ ,
- * Ա՛հ ս Ա՛հ ս ա՛ռ դիւ ,
- * Ե՛րթ առ Մասիան ,
- * Բարձր է քան դիւ : :

Միմենց կողմ դիւղի ներքեւ Արագս գետի
եզր հասանք, և դիւնք այն տեղը մնացել՝ք,
մեզմէ քանի մը մարդ Շարայի դիւղը գնացին
մեր գաղթականաց բնակութեան տեղը ճարել,
որ զան հետ զհետէ տասն տասն տուն ջսկեն
և տանեն այն տեղերը դնեն :

ԳԼՈՒԽ ԻԱ .

Արևն հարաւ Հայուհիքը Արագս գետի եզ-
րը սկսան ջուր տագցնել իրենց վերքեր և ար-
նոտ հանդերձները լուանալ ու ողբը (8) ասել :

Ակրատի ժողն էր Շարայ գնացող մարդի-
կը խուռն բազմութեամբ տեղացի Հայոց եկան,
որոնք երբ զմեզ տեսին սիրոյ և գթութեան
արտասուքը ցողեցին իրենց աչքերէն գրկախառն
համբուրիւ :

Կէս օր եղաւ տասն տասն տուն մեր գաղ-

թաղանթներէն սկսան ջուրվիլ և մօտակայ գիւղերն երթալ Ռուսիոյ նահանգական Տեսչին տնօրէնութեան համեմատ :

Մենք ալ Արմաւրայ աւերակին մօտ հիւսիսային կողմն Շրէզ բլրոյն տակը Տաղանք անուն գիւղը գնացինք , և հինգ ամիս այն տեղը մընացինք :

Տեղացի հայերը զմեզ շատ կը պատուէին , արդէն հիւրասիրութիւնն ալ Հոյ աղղի բնական յատկութիւնն է , զոր քաջ գիտեն ամէն Անշոյողք :

Այն բարեւեր ժողովրդոց համակրութիւնն ու սէրը խալառ ջնջեց մեր սրտէն ու մաքէն այն աղէտալի վիշտը և Սովի տաղնապը , զոր քանի մը ամիս յառաջ կրեցինք :

Սոյն միջոց երեւելի դէպք մ'ալ (A) պատահեցաւ , զոր մտադիր ենք առանձին Տետրակաւ մը 'ի լոյս ընծայել , եթէ միջոց օգնէ մեզ խղճի անդորրութիւնը գտնել :

ԳԼՈՒԽ ԻԲ .

Արդ երբ տմառն եկաւ , Տաղան գիւղէն ելանք , և գեղամայ Հուրեաց Զոր անուն գիւղը գնացինք . մեր աչխարհէն գաղթող ժողովրդեան մեծ մասը այն տեղը հասած կը բնակէր , որոցմէն կարող չ'եղանք զատլիլ , քանզի « Ամէն թռչունը իր երամին հետ կը շրջի » կ'ըսէ առած մը :

Անան ժամանակը հայրս երեւանդ քաղաքը
քնաց մեղի հագի հանդերձը առնելու , ամիս մը
այն տեղը ուշացաւ չ'եկաւ :

Մայրս յգի էր , իր որդեծնութեան օրերը
հասած էին . օր մը երեկոյին մօրս հետ միայն
էինք մեր տան մէջը : Մայրս վառ ճրագի դէմ
կանդնած թեւը կ'ոլորէր չի'թ չի'թ քրտունքը
անոր ճակատէն հասելով վար կը թափէին , և
ինքը նետահար լուսունի նման կը հեծէր և մերթ
կը հառաչէր ցաւօք օրաի :

Ասացի , հա'նի ինչի' կը նեղվիս :

Ասաց . հիւա'նդ եւմ' զա'ւա'կս :

Ինչի' հիւանդ ես ,

Քանդի սիրտս կը ցաւի :

Թո'ղ սիրտդ չ'ցաւի . . . և լացի :

Է' ա'ղէկ չի ցաւիր ծոցնդ . կորէ զաւակս ,
բայց հիւանդ չ'վնեւը ո'չ թէ իմ' այլ Աստուծոյ
ձեռքին մէջն է , որ կ'իշխէ մահու և կենաց :

Ինչ է Աստուած .

ԳԵՐԱԳՈՅՆ ԷՈՒԹԻՒՆ մը կայ' Արարիչ ա.
մենայն էից , Ա. յն իսկ է ամենակալ Աստուած .
որ 'ի քաղցր ակնարկս կը նախախնամէ զբնու-
թիւն 'ի յաւիտենից անտի :

Ո'ղ մեղի կ'իշխէ ,

Նոյն ինքն Աստուած որու քաղցր խնամոյց
ներբեր կ'ապրինք , զթած էնա . որոյ փառքը
կը վայելենք :

Աւրեմն Աստուածը թո'ղ դթա' և գրեղ
սլահէ .

Հապա՛ զաւակս կանչէ Աստուած , որ զիս ողջ սլահէ : ես ալ զքեզ պահեմ , մեծցնեմ . ախ երանի՛ այն աւուր որ իմ աչքը քու . . . տեսնար . երանի՛ թէ տեսնէի , թո՛ղ ետք զերեզմանը մտնէի . ա՛հ ուր է այն օրը . Աստուած իմ պիտի տեսնամ :

Նանի՞ եթէ հիւանդ լինիս ի՞նչ կ'լինի :

Հէրի՛ք որդի , հերի՛ք , արեւիդ մատաղ հայրդ չ'նկաւ հիւանդ եմ . . . կը վախեամ թէ . . . մեռնիմ . . . ա՛հ քու օրերը սուգ կը դառնան , ո՞վ զքեզ պիտի սլահէ : զեւ մատաղս ես , ա՛հ մէկէն արեւը կը մանայ . . . և այս խօսքերուն հետ մէկ տեղը յորդ արտասուքը անոր աչքերէն դուրս հոսեցին :

Է՛ նանի՞ մի՛ վախնար , եթէ դու հիւանդանաս և մեռնիս , ես ոչ քեզի հետ կը մեռնիմ երբ իմ հայր դայ տեսնայ որ մենք մեռած ենք , ի հարկէ ինքն ալ կը մեռնի և դայ մեզի հասնի , մէկ տեղը Աստուծոյ մօտ կ'երթանք :

Ասաց աղէ՛կ կը խօսիս զաւակս , և ժպիտ մը անոր երեսի վրայէն վազեց . . . բայց Աստուած մի՛ արասցէ որ հիմակ մեռնինք միասին , Աստուած տայ ողջ մնանք : բարկքը գործենք , և զինքը օրհնենք , ո՞վ իր մեռնիլը կ'ուզէ . . . Աստուածը մարդս ապրելու և բարկք մը գործելու համար ստեղծեր է :

Հա՛պա ինչի՞ մարդը կը մեռնի :

Մարդուս մա՛հ ինչպէս որ կեանքն ալ աստուծոյ արդար վճիռն է . . . մարդ որ կայ ափ

մը հոգ է , և հողը պիտի դառնայ ' քանզի բր-
նութիւնը շարժման մէջ է :

Բայց վա՛յ այն մարդուն՝ որ դեռ լոյս չ'տե-
սած , առանց բարիք մը գործելու կը մեռնի :

Մարդիկ պէտք է մեռնին . բայց պէտք է
նախ իրենց բնութեան պէտքը լցնեն . իրենց
անձին սուրբ պարտքը կատարեն . զոր ինչ եր-
կինք վճռեցին , և ետք մեռնին :

Կարի թշուառ է այն անձը , որ բնութեան
կարգէն դուրս , վայրենի կեանք մը վարէ , նա
պոնկեալ երեւոյթութեամբ 'ի մեղս կը մեռնի ,
ո՛չ սպարէն Աստուած խղճին անդորրութեան
մէջն է , և ո՛չ թէ խաւար խրճիմն . . . :

Արդ՝ ի՞նչ կը մնայ այնպիսոյն . — ոչ ինչ —
մի միայն հոգաւոր տաղան մը , որ Սրեին
լոյսէն իսկաւ գրկուած է : Ո՛վ կը յիշէ նորա ա-
նունը . — ոչ ոք . — կը մեռնի ինքն և իր անունը
իրեն հետ . նորա էութիւն և չէութիւն մի նր-
շանակութիւն ունին :

Աստուած կուզէ մարդիկ մեռնի՞ն թէ՛
սպրի՞ն :

Աստուածը կուզէ՝ որ մարդիկը բարի ապ-
րին . և բարի մեռնին . բարի է այն կեանքը ,
որոյ մէջ սէր և անմեղութիւն մտաց կայ . բարի
է այն կեանքը՝ երբ բարի հօր մը բարի որդիք
կը յաջորդեն . հայր թէ և կը մեռնի , այլ որդին
անոր տեղը կը յաջորդէ . այս կերպ մեռնիլը
մահ չէ , այլ կիանրի նորագութիւն :

Բարի որդի մը ի՞նչ օգուտ կրնայ լինել ի-

րեն մեռած հօրն և մօրն :

Այդպէս մի խօսիր որդի որդս՝ օգուտը
ինքնին յայտնի է : Հայրը մեռաւ . բարի որ-
դին հօր տեղը յաջորդեց . ասել է մահ՝ չը-
կայ . (այլ կեանքի յաջորդութիւն) և ահա՛ այս
խել անմահութիւն է :

Քանզի բարի որդին վատ ճրագ է , իրեն
հօր տան աշտանակին վրան դրուած , որ իրեն
Ազգին և ընտանեաց լոյս կուտայ , որ իրեն
Գուռը ագիքատին դիմաց կը բանայ , և զայն իր
սուրբ քրտամբք վաստկած հացով կը կերակրէ ,
որ իրեն բարի վարքով , խոհեմ հանճարով , և
անգին արեամբ , իրեն Ազգին վաստքը կը փռե-
մացընէ . հուսկ իմն որ և իր ազնիւ անձին ներ-
կայութեամբ իրեն մեռած հօր և մօր յըշտակը
Աստուծոյ և մարդկութեան առաջ անեղծ կը
աշտէ : « քանզի պատկ հարց որդիք որդւոց » :

Հապա ինչի՞ կը մեռնիս , ուրեմն ողջ մնացի՛ր ,
որ մէկ տեղը տպրինք , և բարիք գործենք :

Աղէ՛կ որդի՛ է՞ զնա՛ մեր Դրացի Պօռաւ
կինը կանչէ , որ դայ գիշերս մեզի մօտ քնա-
նայ , և զիս հօկէ . թմբութիւն մը պտտեր է
իմ անձը , դողը զիս բռնած է : կը տազնա-
սիմ ես :

Դնոցի ես , և մեր Դրացի Արծուն կինը
կանչեցի , եկա . մոցրս մեր տեղերը սփռեց ,
եւ մօրս ծոցը մտայ . դէմքս չորս զոյգ ոտեանց
մէջ թաղեցի , Արծունն ալ իր տեղ մտաւ . ճը-
րագը մարեցինք , և ի բուն մտանք :

Եւստուն դէմ քնից արթնցայ, աչքս բացի տեսայ, որ վառ ճրագը աշտանակին վրայ դրված՝ կը վառէր :

Արծունը մօրս գլխի վերեւը նստած, ամոր ճակատը կը շփէր, և կը մխիթարէր զայն անբարով : — Եւ մի՛ վախճա՛ր Աստուծով աղատեցար :

Խակ խեղճ մայրս յագիւտ սքտիւ կը մօրն շէր, և երբեմն կ'աղաղակէր : Արդե՞ք Յակոբ պիտի գայ հաճի ինձի, որ զինքը տեսնամ. յետոյ մեռնիմ, ա՛խ ո՛ւր է մեր մարդը չ'եկու. . . : Արծուն, ըսու, կանչէ իմ անուշ Ապահը, քնից հա՛ն, թո՛ղ ինձ մօտ գայ, զինքը տեսնամ, իր այտերը համբուրեմ, ևս կը մեռնիմ, աշ յոյսը չ'կայ, որ ևս ողջ մնամ, պիտի մեռնիմ, ա՛խ պիտի մեռնիմ :

Ապահ՝ ելի՛ր մայրդ գրեց կը կանչէ որդի, — ըսու Արծունը :

Տեղէս երայ, և լսելով զնացի մօրս գիրկն անկայ :

Ի՞նչ է նա՛նի, ի՞նչ է եղեր քեզի, ասացի :

Ասաց — ձայնդ կտրէ մոտա՛ղ եղնիմ արեւիդ, Ապահ՝, ձայնդ կտրէ, — այտերս համբուրեց, և զիս իր գիրկն առնելով բարձին ողնեցու :

Կրկին քունը զիս տարեր էր, ևս քնացեր էի, Արեն տուեր էր, մօրս ցաւը փոքր ինչ թեթեցած կ'երեւէր, երախայի մը սուր ձայնը առ կանջս անկու, մէկէն քնից սթափեցայ, և տեսնելով որ մօրս աջ կողմը փոքրիկ փաթեթ մը կայ :

Ասացի նանի՛ր ո՞վ է այն :

Այլեւի՞դ մատաղ քեզ քոյր մը եղաւ :

Այս խօսքը երբ լսեցի , սիրտս անսպասելի ինդուլթեամբ մը լցաւ . ուրախութիւն մը գգացի , զոր լեզուք մարդկան կարող չ'են թարգմանել . ուրախութիւն մը կ'գգայի , որ յետ սակաւուց 'ի սուգ , և 'ի տրտմութիւն ոգւոյ պիտի փոխվէր :

Ասացի , նանի՛ , թո՛ղ որ գրկեմ իմ քոյրը , նանի՛ թո՛ղ որ համբուրեմ զայն , թո՛ղ որ իմ անուշ քոյրը գիրկս առնեմ :

Ասաց , համբերէ՛ զաւակս , համբերէ՛ , թո՛ղ բարով հայրդ գայ . քոյրդ ժամ կը աանի . Նրէցը զայն կը մկրտէ , կը սրբուի , Անքահայրը հօրդ հետ կ'առնեն քոյրդ տունը կը բերեն , ետք գու գրկէ զայն և համբուրէ , որքան որ կը սիրես . « Զեր սէրը սո՛ւրբ է » :

Ինչի՞ իմ քոյրը հիմակ սուրբ չէ :

Զաւակս , սուրբ է , Աստուծոյ զայն սրբեց , բայց երբ Նրէցը զայն մկրտէ , և մասնաւոր , Քրիստոսի անրիժ արիւնն ալ քրոջդ սիրտու միտքն սրբելով՝ անոր հոգին Աստուծոյ սիրով կը բոցբոցէ , քոյրդ մէկէն լոյս կ'եղնի . և լուսոյ որդի :

Նանի՛ , ուրեմն երթամ համբուռն վրայ նա . յիմ , տեսնամ , հայրս եկա՞ւ թէ ո՛չ :

Աղէ՛կ արեւի՞դ մատաղ , գնա՛ նայէ՛ տե՛ս . թէ հայրդ եկա՞ւ , և շո՛ւտ արի՛ այն տեղը շատ մի՛ մնար :

Գնացի ես ձորի ճամբուն վրայ նստայ մինչ
 ՚ի կէսօրը , հօրս օգտսեցի , չ'եկաւ , լալով
 տունը դարձայ . Մայրս ձեռքէս բռնեց՝ նստոյց
 զիս , և հացը առջևս դրեց ուտելու . յաճախ
 երեսօ կը համբուրէր և զիս մխիթարելով կ'ը-
 սէր . — Մի՛ լար , դաւա՛կս , մի՛ լար , հացը
 կե՛ր , Աստուծով հայրդ վաղը կուգայ :

Մեր դրացի Հայ կանայքը՝ հողէ անօթճերը
 լիք կերակուր չցած՝ իրենց թևի տակն առած՝
 մօրս « աչքդ լո՛յս , կուգային , և մէկ մէկ ժամ
 մօրս անկողնոյն մօտ նստելով , կը մխիթարէին
 զայն , և կերէնէին կերթային « Օտարին սիրտիան-
 քը հոգածու սրտին օգուտ չ'են » :

Հայրս ուշացաւ չ'եկաւ , ութ օրէն ետք
 մայրս իմ քոյրը մկրտել տուաւ . ինքը ոտքի վը-
 րայ ելած տան մէջը կը շրջէր , և միշտ հառա-
 չելով կը մօրմոքէր :

Երեք օրէն ետք կրկին ցաւը մօրս վրայ
 ծանրացաւ , և անյուշ զայն անկողին ձգեց :

Մատաղ քոյրս նորա անկողնոյն մէկ կողմն
 անկած կը ճճա՛ր , ես ալ միւս կողմն նստած
 կուլայի . ո՛չ մեզի հացը կողող կար , և ո՛չ ջուր
 բերող , ո՛չ մօրս դեղ և դուր բնող կար , և ո՛չ
 մեր ձայն կտրող . կը լայինք մենք , ո՛հ , և մեր
 մօր ցաւը հետզհետէ կ'աւելնար :

Արեւն առեր էր , յանկարծ հայրս մեր տան
 դուռը բացեց և ներսը մտաւ : Մայրս դրան
 ձայնը առնելով բնական զգացողութեամբ մը
 սուր ձայնով զսչեց : — Յակոբ եկա՛ր , մա՛րդ

ի՞նչ եղաւ քեզ : ալ չ'ես գտար : Ահա ես կը մեռ-
նիմ , ա՛խ տե՛սայ գքեզ ալ թո՛ղ մեռնիմ : Աստ-
ուած իմ , իմ օրտի անմեղութեան նայեցիր .
ո՞վ գո՛հ եմ գքէն . ո՞րքան դժած ես , օրիոյ
և սրբութեան Աստուած :

Հայրս մօրս անկողնոյն մօտ ծուռնի վրայ
գալով ասաց . — Աստուածը բարին յաջողէ ,
ի՞նչ եղեր է կի՛ն , ի՞նչ եղեր է , ա՛խ իմ հոգին
եղնայ : Ես ալ ուրախութենէ կը լայի , և հօրս
ճիտը կը գրկէի :

Հայրս գորովալից օրտի մը երեսներս համ-
բռնեց , և ասաց ինձ . — Չայնդ կորէ՛ , ձա-
ղուկս , ձայնդ կորէ՛ , տեսնա՞ք մայրդ ի՞նչ ե-
ղեր է . և աչքերը արտասուօք լցուած դառնա-
լով դէտ ի մայրս ըստ . — Ի՞նչ եղաւ քեզ կի՛ն,
ի սէր Աստուծոյ ի՞նչ եղաւ :

Մօրս շրթունքը կապած , ասլուշ կերպով
մը հօրս երեսը կը նայէր , և խօսք մը անդամ
անոր բերնէն դուրս չ'էր ելնար :

Հայրս լալով ասաց մօրս . — սիրա՞ն կու-
գե՞ս գրո՛խդ գիրկս առնեմ , ինձի թիկնիր . ի-
ցէ՞ թէ մօքը ինչ հանդէս :

Մայրս սուր ակնարկ մը հօրս վրայ ձգելով
հաճութիւն սրտի յայտնեց , որով հայրս անոր
գլուխը բարձէն վեր առնելով մօրս թիկունքը
գրկեց և նստաւ , իր երեսը անոր ճակտին դը-
նելով :

Հայրս կուլար , և իր աչքերէն գի՛լ գի՛լ
արտասուքը մօրս երեսին վրայ կը կաթէին , և

մօրս երեսէն ճիւղ ճիւղ վազելով իրեն ծոցը
կ'անհետէին . . . :

Ա' հորքան ցաւալի է այսպիսի բաժանում
մը՝ երբ երկու անմեղ լծակցաց սրտին մէջ ա-
մուսնութեան սուրբ սիրոյ մի և նոյն զգացումը
կը մշտնջենաւորէ :

Հետզհետէ թմրութիւն մը մօրս ակրեց , իբր
վարդապետ այտերը կը թառամէին , և ինքը ար-
մատէն կտրած ծաղկի պէս գունաթափ կը լի-
նէր , դեղնութիւն մը անոր դիմաց վրայ եկաւ ,
և ինքն սկսաւ հառաչել :

Հայրս որ թմրած անթարթ աչօք մօրս ե-
րեսը կը նայէր , յարտասուս փղծկեալ գոռաց ,
— Կի՛ն ի՛նչ եղաւ քեզ , 'ի սէր Աստուծոյ ի՛նչ
կը լինիս : Ա՛յ Տէր ե՛ս մեղայ ե՛ս , թող քու բա-
րի կամքն եղնի :

Մայրս հատկեալ ձայնով մը գոչեց , — Մա՛րդ-
եա կը մեռնիմ , ալ յոյսը չ'կայ , ինձ մի՛ մոռ-
նար . . . :

Ասաց հայրս , — Հասաւ դիս ո՛ւր կը թո-
ղուս , որբե՞րդ որուն կը թողուս , և երկու ձե-
ռօք սկսաւ իրեն զլխուն զարնել ու գոչել . . . :

Մօրս աչքերէն երկու կաթ արտասուք փա-
ղեցին . մէկ մը հօրս երեսը նայեց , մէկ մ'ալ
երկինք , և յազեալ սրտիւ մը այս երկու խօսքը
արտասանեց , — Մա՛րդ ես ի՛նչ ընեմ , Աստուծոյ
կամքն է . . . : Եւ երեսը գէտ 'ի ինձի դար-
ձընելով ձեռքը սրտիս վրայ դրեց . Ա՛յս իմ ա-
նուշ դաւակ . . . ըսաւ և իր հողին աւանդեց :

Հայրս ուշիկ մը մօրս գլուխը բարձին վրայ
դրեց , տեղէն վեր ելաւ , իրեն սաքերը դողալ
սկսեցին , ինքը դուռն վեր վերցուց և դռնէն .
— Աստուած իմ հոգին ա՛ն , իմ հոգին , Աստ-
ուած իմ հոգին ա՛ն , ալ ինձ օր և Երև տես-
նալ ողէաք չ'է . ա՛խ իմ աչաց լցուք քաղվեցաւ ,
ալ իմ կեանքն ի՞նչ է :

Ահա՛ իմ կեանքը մեռաւ , իմ հոգին ալ
հետ . մեռնի՛մ , յա ալ , մեռնի՛մ , թող մահը
զմեզ չ'բաժնէ . • Սիրոյ մէջն է տնմահութիւ-
նը . . . :

Հայրս երկու ձեռք իր գլխուն և ծնկնե-
րուն զարնելով ուշաթափ երեւի վրայ դեռին
անկաւ :

Տխուր լուսնին մը մեր փոքրիկ Տնակինը
տիրեց . ո՛չ ոք այնուհետև հառաչանայ , և փը-
տալի հեծութեան մը լսարանի կը փոխվէր :

Մէկ ժամէն ետք՝ մեր Գրացիք մօրս մահ-
ուան լուրը առին եկան , մայրս լուացին , սպի-
տակ կտաւով սլառեցին . Նրէց կարողը զատա-
րեց , նորա մարմինը զաղաղին մէջ դնելով ի-
րենց թևերու վրայ առին , և խուռն բաղմու-
թեամբ տարան Հուրեաց ձորի Արեւմտեան կաղ-
մին գերեզմանատուն ի հողը ամփոխեցին . . .
Դեռ հայրս ուշաթափ անկած էր գետին :

ԳԼՈՒԽ ԻԳ.

Սրժուներ մատաղ քոյրս ապրեր էր ծիծ տա-

բաւ . ես և Հայրս միայն մնացեր էինք մեր փոր-
րիկ Յնակին մէջ , որու պատու ու անկրք սուգ
և տրամաթիւնը զգեցած էին :

Հայրս ո՛չ կարող էր հաց ուտել և ո՛չ ջուր
խմել , միշտ զիս գիրկին առած , իր երեսը իմ
երեսին դրած կուշար , կը մազկտար , և միմեզ
արցունքը իր աչքերէն կը թափէր :

Յուզեալ սրտիւ կ'ողորար ու կը դռէր . —
Ապա՛հ ո՛ւր է մայրդ , ա՛խ ես դքեզ ո՛ւր տա-
նիմ , ա՛խ ես ի՞նչ բնեմ , ի՞նչ սեռուդ . եկաւ
մեր գլխուն , . . :

Ապա՛հ ելի՛ր դքեզ տանիմ մօրդ մօտ , ե-
լի՛ր երթանք մօրդ տապանը , դուցէ մայրդ եւ-
նայ գմեզ իրեն հետ տանի : Հերի՛ք մինակ աչ-
տեղը մնանք ձառս՛ւկս , հերի՛ք : Ելի՛ր երթանք,
մայրդ գլխու է , տապանէն դուրս կ'ելնայ , ըզ-
մեզ իրեն հետ կ'տանէ կ'երթայ :

Ապա՛հ մայրդ դքեզ տեսնայ ու չ'գլխո՛յ ,
կարեկի չէ՛ . ի՞նչ սխալի ասէ ինձի , որ գիտ իրեն
հետ չ'տանի : Միթէ՛ ես օր մը անոր սիրար կոտ-
ւեցի՞ , չէ՛ , չէ՛ :

Երկինքը գիտէ թէ՛ ես մօրդ հետ ի՞նչ կերպ
սիրով էի . այլ չ'գիտեմ թէ՛ իմ մեղքն ի՞նչ էր ,
որ Արեւը զիս խեթիւ եհար . իմ սիրայ հետ երբ
խառնեց , իմ կեանքը խլեց , կխտասիրու հողի
ծոցն իջուց , և զիս վշտահար աշտո՛ղս երեսի
վրայ թողուց :

Ա՛խ Ապա՛հ որդի՛ , լաւ է ինձ մեռնիլ քան
թէ ստիկ ետք սպրիլ , և լոյս Արեւը տեսնուլ :

Ելի՛ր երթանք , անշուշտ պէտք է մեռնինք և մայրդ տեսնանք :

Հերի՛ք մնանք , այլ կեանք մեզի պէտք չ'է : Մայրդ գնայ , և մենք այս տեղ մինակ մնա՞նք . ի՞նչ է մեր կեանքը : Ելի՛ր երթա՛նք ձագճուկս , ելի՛ր երթա՛նք , հիմակ մայրդ ալ կ'ուլայ և մեզի կ'սպասէ թէ՛ ի՞նչ եղաւ , որ ուշացան չ'եկան :

Ելի՛ր ձագճուկս , այս տեղը ալ մեզի բան մը չ'մնաց , ելի՛ր . չէ՞ գիտես մօրդ սիրտը հիմակ արեան ծով կտրած է , չէ՞ գիտես մօրդ ազնիւ խիղճը , հիմակ իրեն աչքերը պղտոր աղբիւրք դարձեր են , քեզի կ'սպասէ . ելի՛ր երթանք չը վննի թէ վշտանայ :

Հայրս ձեռքս բռնեց , մեր տնակը ամայի թող տալով դուրս ելանք . և երբ գերեզմանոցին մօտ հասանք , հօրս ծունկերը դողացին , և լնքը գոռալով երեսի վրայ գետին անկաւ :

Անցա՛ն քանի մը վայրկեաններ , հայրս տեղէն վեր ելաւ , զիս իր գիրկն առաւ . քիչ մը առաջ գնացինք . երկու տասանամքարի մէջ տեղը գետնէն կանդնաչափ բարձր տապանի ձեով կիտած թթեղ մը վուրխ հողը երեաց . : Հայրս զայն տեսած միջոց . յուզեալ կերպիւ մը գոչեց :

— Ա՛ն քու սուրբ հողին մեռնիմ , որոյ գիրկը թաղուած կաս դու Արամն , ա՛ն քու որդին , ահա՛ քեզ բերի . ա՛ն գիրկդ , քեզի՛ հետ տա՛ր , չ'մնաս կարօտով ա՛խ ա՛խ ա՛խ . . :

Ա՛ն Արամն ա՛ն , Աստուհն է , զոր գիշեր

ցորեկ գիրկդ առած՝ երեսը կը նայէիր և չ'էիր յագենար, բա՛ց քու սիրոյ գիրկը. քու փափաքն ու կենաց պտուղը՝ ի ծոցդ ամփոփէ. ա՛ն ա՛ն դռնէց հայրս, և զիս իրեն գրկէն մօրս գերեզմանին վրայ ձգեց:

Հայրս իրեն թեւերը պարզած մօրս ցուրտ Տապանը գրկեց. երեսին վրայ անկեր կը հեծէր կ'ողբար, և մրմուռ արտասուօք մօրս չիրմին տառակ հողը կը թռնար: Ամուր ձեռօք մօրս տապանին կը դարնէր ու կը դռնէր. — Ելի՛ր ելի՛ր տե՛ս թէ ի՞նչ սուգ զմեզ պտաւեր է:

Ես ալ միտէս կողմն մօրս տապանի հողին վրայ անկած կը ճճայի, կը լայի. չ'էի գիտեր թէ՛ մօրս մեռնիլը ստոյգ է. քանզի մեր Դրացիքը զիս խաբեր էին թէ՛ մայրդ դնացեր է Եկեղեցին. քիչ մը ետք պիտի գայ:

Հա՛յր, հա՛յր, ելի՛ր, զիս իմ մօրս տա՛ր, ս՛ւր է իմ մայր ելի՛ր, ելի՛ր կը դռնէի. և արտասուքը դետօրէն աչքերէս կը վաղէին:

Այս աղէտից կարող չ'եղաւ դիմանալ հայրս, իւր սիրտը բեկաւ և լալով դռնէ՛ց. — Հա՛ ձառուկա հա՛ զիտեմ որ կ'ուզես մօրդ երթալ. բայց ես զքեզ ս՛ւր տանիմ, ս՛ւր է մայրդ ստոյգ. — ահա՛ այս տեղն է մայրդ, և ափով հողը վերուց. իր գլխուն ցանեց:

Հայրս զիս գրկեց, ծռնկերի վրայ եկած մօրս տապանին քով, սկսաւ ձայն տալ բեկեալ սրտիւ:

— Ելի՛ր ելի՛ր ա՛ն ահա՛ կ'ուրոյ Ապա՛հ, զքեզ կուզէ. խեղճ տղան քնից նոր ելաւ, եւ

էի՛ր կի՛նն ա՛ռ դու քու որդին . չէ՛ կը լսես ահա՛
կ'արտասուէ , և նանի՛ կը գոչէ :

Հայրս շատ մը ողբալէն ետք մօրս տապանը
համբուրեց . այս խօսքերն ըսաւ . — « Սիրա՛ն
մեռնողին ետեւ մարդ չ'մեռնի » արդէն գիտեա
թէ՛ . « Այս աշխարհ եկող մարդոց բաժին վիշտ
և հեծութիւնն է » ո՞վ իր սիրոյ պտուղը վայելեց
սաանց արտասուաց . Սիրա՛ն սիրտդ ինձմէ չը
մնայ : Ահա՛ ես կ'երթամ , և այն յոյսով , որ
սիրոյ աշխարհին մէջ դ քեզ նորէն պիտի տեսնամ :

ԳԼՈՒԽ ԻԴ .

Հայրս խմ թէէն բռնեց և գոչեց . — Ելի՛ր
ելի՛ր ձագուկս . Աստուծոյ կամբը ամենէն հզօր
է : . ո՞վ գիտէ Աստուծոյ միտքը , զոր ինչ երկին
վճռեց անմարթ է եղծանել » ակտք է սիրով
տանինք ամէն փորձանաց , զի այս Աստուծոյ
բարկութեան հողմն է , որ 'ի մեզ շնչեց : Միտ
մի՛տ եղիր , քեզի պիտի գթայ նա . յոյսդ նորա
վրայ դի՛ր , նա քեզի համար պիտի հոգայ իր
քաղցր զթութեամբը :

Մայրս քանի մը օր առաջ՝ գլխոյս հերքը
սանտրեր , երեք հիւղը հիւսեր , ուսերուս վրայ
ձգած էր . զոր հով քամին փչելով թիկանցս մէջ
կը ծածանէր զայն՝ խառնելով իմ խարտեաչ հո
ղսպեաց հետ :

Հայրս վաղակը իրեն մէջքէն հանեց , զըլ
խոյս փեղոյրը վերցուց , և խմ երեք հիւս հերքը

կտրեց և մօրս տապանի հողը բրեւով երկու ճիւղն այն տեղը թաղեց և միւս ճիւղն ալ սցն թեղօջ ծառի շիղը կապեց և զոր մօրս տապանին զլուխը տնկած էր ։

Հայրս ետք պաղ ջրով իմ գլուխ՝ և իր աչաց արտասուքը ու երեսը մօրս տապանի հողին վրայ լուաց և սուգէն ելաւ և ձեռքս բռնեց մեր ամայի տնակը դարձանք ։

Արծուներ ներս մտաւ լալով և ըսաւ հօրս . — Դու և Ապահ ո՛ղջ մնաք և աղջիկն ալ մեռաւ ։

Հայրս խկոյն ծռնկի վրայ եկած գետինը համբուրեց և ասաց . — Գո՛հ եմ քեզմէ Աստուած իմ Աստուած իմ, որ ինձի խնայեցիր և թեթեւ առնել իմ նեղութեան բեռը . քեզի քու խնամոց կը յանձնեմ զիս Տէ՛ր . դու քու բարի կամոց համեմատ ինձի եղած պէտքը տնօրինէ . ես կարող չ'եմ գիտել իմ բարիքը . գո՛հ եմ քեզմէ ո՛վ անհուն Էութիւն . դու ես Աստուած իմ որ զիս կը խնամես ։

Արծու՛ն՝ դռչեց և հայրս . — Ասա՛ կրէցը . թո՛ղ մատաղ Աղջիկը նոյն տապանը իրեն մօրը ծոցը թաղէ ։ Շուտ թաղել տո՛ւր՝ օրի՛ . ալ ինձի այս տեղը մնալու մխիթարութիւն մը չ'մնաց ։

Հայրս այն օր ողորմութիւն բաժնեց և մօրս հողւոյ հացն ալ տուաւ . մեր տան մէջի եղած գոյքը թէ անկողինք և թէ անօթներ Արծուին տուաւ . գիշեր մեր տունը մնացինք ։

Հետեւեալ օր՝ Արեւն առաւ և հայրս ձին դուրս հանեց թամբեց և ձեռքս բռնեց՝ դուրս ելանք՝

Եսան դուռը փակեց . այն տեղը սղբ մ'ալ ա-
սաց . ձին հեծաւ , զիս զիրկն առաւ , ճամբայ ե-
լանք :

Մօրս գերեզմանի մօտէն անցած միջոց ձիէն
վար իջանք . մօրս տապանին վրայ դնացինք ,
հօյրս ողբ մ'ալ ասաց լալով , և երեք կույր
հօղը մօրս տապանի հօգէն առաւ , թաշկինակին
մէջ լցեց , մեր պահեցողին մէջը ծրարեց , և
գառնալով դէպ 'ի մօրս գերեզմանը ըսաւ . —
Սիրա՛ն ահա՛ կ'երթամ , և քու սիրոյ գրաւը հե-
տըս կը տանիմ . Սիրա՛ն մնառ բարով . ես կ'եր-
թամ այն անմահ յուսով , որ երկինքը զիրար
տեսանք . . . :

Հայրս ձին հեծաւ , զիս զիրկն առաւ , և
դէպ 'ի մեր հայրենիքը դարձանք : Շիրակայ
դաշտէն կ'անցնէինք , Անի քաղաքի փրած Աշ-
տարակները հեռուէն երեցան , հօրս աչքերը
արտասուօք լցած ըսաւ ինձ : — Ասկա՛ն ահա՛
այս Աւերակը Անի՛ն է , Անի՛ն : Ահա՛ այս ցցուած
Աշտարակներ մեր Ղիւցաղն նախնեաց փոշիացած
փառքի բեկորներն են , որք դեռ կանդուռն կը
մնան : Ա՛ն Անի՛ն Անի՛ն , իմ Արե քեզ մատաղ
լինի : Արդե՛օք 'պիտի դա՛յ 'օր ուրախութեան
Անի՛ն , որ դու կապեա կրկին թագ Ազատութեան՝
• Ազատութեան հողին Արիւնն է : :

Քանի մը օր ալ ճանապարհորդութիւն ը-
նելով հասինք Հարք դաւառը , Լիւզ գիւղ . ուր
մեր տունն է , և տեղի բնակութեան մերօր
նախնեաց :

Մեր զիւղ հասած միջոց հայրս մօրս զե-
րեզմանէն իրեն հետ բերած հողը տտրաւ զե-
րեզմանոց, մեր Նախնեաց զբից մէջ, որոշեալ տեղ
մը բրնց, և զայն այն տեղը լցնց. քար մը օ-
ծել տուաւ այն տեղը կանդնեց, և կտակեց որ
զինքը հօն թաղեն զկնի մահաւան :

Ներկայ էի հայրս մեռաւ 1855 ին Ապրիլ 19
տաւգ Ուրբաթին, որոյ մարմինը տարանք այն
կտակեալ տեղը մօրս հողին ծոցը թաղեցինք և
նորա ցուրտ շիրմին վրայ կանդնեցինք մահա-
ձան մը, որոյ վերայ գրուած է այն սլարդ տա-
ւանագիրը :

Յայս Տաղան ամիրտիին
Ոսկերք խի և մարմին
Յակովբայ որոյ հողին
Դարձ ՚ի գիրին Անեղ էին :
Ի՞նչ կաթիլը բրտանց
Յօղովք արտառուաց
Թացցեն զՁեր տապան
Է՛ Յակօր Սիրան :

(Ա) ՄՆԱՅԻ ԲԱՐԵԱԻ

1. Թրթուրն եկաւ մեր Յանքը կերաւ,
Մեր Արան ու տիը մօխիր դարձաւ,
Մնաք բարով Սարե՛ր Զօրե՛ր :
2. Յօրեն չ'եղաւ Գըլիը կերանք,
Մեր ուռած հացն աղու դարձաւ,
Մնաք բարով Դարե՛ր Դաշան՛ր :
3. Զմեռն եկաւ մեր զուռն առաւ,

- Կայրն իւր մանկան ձգեց փախաւ ,
 Մնաք բարով Էրս՛ւնք Թռչո՛ւնք :
 4. Սովն ալ եկաւ վրայ հասաւ ,
 Իր սուրը մերկեց մեզի կտրեց ,
 Մնաք բարով Քարե՛ր Թփե՛ր :
 5. Մահը վաղեց դռնէն մտաւ ,
 Հարսը փեսի գրկէն խեց ,
 Մնաք բարով Լուսի՛ն Աստղեր :
 6. Մեր սիրտը կտրաւ , Աւրը չ'մնաց ,
 Մեր Հոգն ու Չուր սև օձը դարձաւ ,
 Մնաս բարով բարի Արե :

(Բ) ՈՂԲ ՍՈՒՐ ՍԱՐԻ ԹՌՁՆՈՅՆ

1. Արե՛դ մերկացի՛ր քու ոսկի Շապիկը ,
 Բա՛կ ա՛ռ սուրբ Լուսի՛ն , սագ մտիւր Երկի՛ն ,
 Տեսէ՛ք Հայ Հուրիք կ'երթան կոծեւով :
 2. Աստղի՛կ լոյս մի՛ տար , ելէ՛ք թուխ Ամալե՛ր ,
 Հանիժ ու կայծով հարե՛ք այս Երկիրը ,
 Պառները դնացին , դեռ կո՛ռնան Պայլեր :
 3. Հոգի՛ մի՛ հեար , հիր եղիր է՛ նիւթ ,
 Վի՛ն աներեւոյթ խառէ խառէ ըզննուտ ,
 Հայեր դաղթեցան , Մէդ հա՛ր գլխորդան :
 4. Հարաւ մի՛ շնչեր , Հիւսիս մի՛ փչեր ,
 Թո՛ղ Մշուշ սրտա՛յ Բիւրակնեան սարեր ,
 Աւրը Հայու սիրտ կայ , թող սատկին օձերը :
 5. Եփրատ ավերող հա՛տ , Հուր եղի՛ր Հրանա ,
 Յարիւն ողորէ՛ք Հովիտ Անդ ու Ղաչա ,
 Հայերը խեղճ ունին , Հաղարը Սուր ու Սանդ :

Նազիկի մի՛ նազեր : Ծովիկ մի՛ ծվար :
 Սիրի թո՛ղ Սամն երթայ . դու ՚ի նա Հուր հա՛ր :
 Սիրտ Հայուն սիրան է : Սէրդ այլոյ մի տար :
 7. Աշուն ձեզ հասաւ : լռէ՛ք Ծիծառներ ,
 Թո՛ղ զՀայս աւեր կոչեն կոյր Բուերը :
 Հոգին տայ Սո՛ւր : Աէ՛ր Շէնը շինեն Հայեր :

(Դ.) ՍՊԱՆԵԱԼ ՕԶՆ

1. Սուկա՛ և սարսի՛ր ո՛վ նախանձ Սատան ,
 Զի դու գեռ պահեա Ուխտ թշնամութեան .
 Օձու Չեք մտած հպիս հեղարար :
 Զորդւոցն Եւայլ՝ խայթել զՔարչապար :
2. Հայն վաղ պիտրձն էառ , չ'անտալ Ատերւոյն ,
 Որ չրջի թաղուն ընդ լեզաւ իւր Թոյն ,
 Դիպաց սպասեւ խոցել անխնայ ,
 Ըղիւրն անոյեան երբ անգէն դտնայ :
3. Զինչ չա՛հ ոյն Թախանձ , ուր տիրէ Նախանձ ,
 Ներել թշնամոյն մահու տալ գիւրն անձը ,
 Թէ՛ և գեղեցիկ , թէ՛ և սիրտ իթ ,
 Օձու հրապոյրը մեզ ատելի է :
4. Ամօթ քեզ Սատան , ուժոյդ վորձն առե՛ր ,
 Հայն չ'ուճի երկիւզ , թովել չ'զիտեր ,
 Իւր միտքը Սուր հատու իր սիրտն է Վահան ,
 Ի մի զարկ չրջէ զթշնամին կործան :
5. Տե՛ս քու չարութեան նուաղեալ Պատկե՛ր ,
 Որ Ծառէն կախված՝ կը թռէ զՍտղեր ,
 Հայն ո՛չ Բաղդ գիտէ , և ո՛չ Բժժանք ,
 Երբ Վրէժը լռձէ կը վարէ Սդառ կեանք :

Յ Ես կ'երգնամ եթէ՝ Եւան Հայ լինէր ,
 Օձը երբէ՛ք գոյն կին խաբել կարող չ'էր ,
 Չը գիտէ Հոյ Տիկին հասկա կեղծ ժողովուրդ ,
 Ինչ շահ է Օձին բանալ իր պարզ Միտք :

ՈՂԲ ՕՉՍ.ՀՍ.Ր ՊՍՏԱՆԻ ՀՅՆ

1. Աղբեր գլուխը վարդ բուսած էր ,
 վարդի բոյլն վառաբն երու ,
 Գլուխը անկեց և սուր սուլեց ,
 Սիրտը գետին փռեց փախաւ :
 Աւա՛ղ Սիրտի Արեւուն ,
 Ահ Օ՛ր եկաւ իր Մօր գլխուն :

ԳՈՎԵՍՏ ՄԹԻԱԼԻ

2. Մթխալը տեսաւ , փաղեց հասաւ ,
 վահ՝ Արտիկամբ կրակը դարձաւ ,
 Աղանեց վախալը , Ծառէն կտակեց ,
 Եղջուրը հանեց , վրէժն տաւ :
 Երնե՛կ Մթխա՛ւ բղբեղ Ուղղին ,
 Երնե՛կ քեզի ու քու տանողին :

(Ե) ԵՐԳ ԱՌ ՀՍՅ ԹՌԶՈՒՆ

1. Երգեա՛ Սոխակ անուշիկ ,
 'Ի գիշերին զո՛հ գողտրիկ ,
 Որ յար տանուս բզդադար ,
 'Ի փայրս Հայոց գեղեցիկ :
 2. Սոխա՛կ բզքեզ բնտանի ,
 Խօսք քա տանեն Հայ Ազգի :

- Երգեա՛ 'ի սէր խանդ ու մանդ ,
 ԶՀայ Ազգին հին Աւանդ :
 Ծ. Երգեա՛ 'ի զով Հայ թռչուն ,
 Հերի՛ք հեծեալ ու 'ի քուն ,
 Արի պատմեալ զԲաղդն Հայոց ,
 Զի՞ զուր երթայ Յայդ փահուն :
 Կ. Սոխա՛կ միայն դու կացեր ,
 Հաւատարիմ Հայ Հողոյն ,
 Որ ոչ տառի հեռացար ,
 Եւ ոչ զբոյնդ փոխեցեր :
 Զ. Գիտեմ սիրե՛ս զՀայ Աշխարհ ,
 Յորմէ երբէք չ'եղեր տար ,
 'ի սէր Հայոց սուրբ Հողոյն ,
 Ասա Ահա՛ ինձ զոր ինչ բռար :
 Ե. Քան զի քո ձայն կենդանի ,
 Յիս արծարծէ նոր Հոգի ,
 Զքաջութեան դարն Հայկեան ,
 Բերէ մտացս յանդիման :
 Զ. Զի՛նչ յիշատակ Հնութեան ,
 Հաւ քո պատմէր զՀայկեան ,
 Զորոց փառաց ըղ Բամին ,
 Երբք աչաց նորին տեօին :

ՍՈՒՍԿ

- Զ. Զի՛նչ ինձ փարձ Հայ պատանի ,
 Տառ , թէ՛ երգեմ զՎարն ոսկի ,
 Զոր իմ մեծ Հաւն աւսոյ ,
 Ես 'ի մատաղ հասակի :

ՀԱՅ ՊԱՏԱՆԻՆ

9. Հայոց ազնիւ Աշխարհին ,
 Մարմանդք դետոց քեզ լիցին ,
 Զորովք Մրտին և Բարտին ,
 Հուրան առնեն զովագին :
10. Անդ քեզ հիւսեա՛ զԲոյն Անուի
 Ընդ որ վճիտ Գեաք հոսին
 Զորովք ուղէչք Ուռենեաց
 'ի ճիւղ ճկուն գալարին :
11. Անդ խա՛ղ առնեն խաղ ճկունք ,
 Ուր լճանան մանր Առուք ,
 Դու անդ կացցես ապահով ,
 Ուր վառի վարդն 'ի Շաղ զով :
12. Էառ Սոխակն զթեւ բանին ,
 'ի ծոց լսին Քիչերին ,
 Զնորին հեղիկ խօսից խանդ ,
 Տեղայր 'ի մեզ հով Քամին :

ԵՐԳ Զ.

ՍՈՒՍԿ

13. Միտ ա՛ռ է՛ Հայ Պատանի ,
 Թռա՛ւ դնաց Դարն Ոսկի ,
 Երբ Արամայ վառէր վառ ,
 'ի զով Մասեաց հովա՛հար :
14. Արդե՞օք յիշեն Հայք զԱրամ ,

- Զոր քաջ գիտեն ճենք և Սամ,
 Նա 'ի հազրաւ Քաջութեան
 եւ ըզդահ իւր յԱրեգտան :
15. Նմին չ'եղեն զխնայրաւ ,
 Ո՛չ Հիւսիս և ո՛չ Հարաւ ,
 Յելից Արփույն մինչ 'ի Մուտս ,
 Տիրէր նա բուռն բաղկաւ :
16. Նա հաստարուն Աղեղամբ ,
 Նեա թոթափեաց շանթառաք ,
 Հար զՀուդ զԲուդ զՇվոտ ,
 Շողեաւ արեան ելից զօդ :
17. Նմին ուխտեն կամակար ,
 Ազդ և Աղինք աշխարհի ,
 Հայ ազգին լինել գերի ,
 Հարկըս հարկել ց'ըրիւր դար :
18. Վկայ չէք Արեգ Լուսին ,
 Ասողալից սլառմէ երկին ,
 Զգործ քաջութեան Արամայ ,
 Կնքեաց 'ի Կիւն Հայկայ :
19. Նոյն կարդայ զի Հայ Անուն ,
 Վե՛հ ծանկցի յաշխարհի ,
 Հարկէ խօսիլ զՀայ Լեզուն ,
 Խուժ և Գուժ Ազգաց երկրի :
20. Ոսկի Խնձոր յերկնից կախ ,
 Լոյս մեծ առնէր Հայոց Տան ,
 Եւ գեա Գինւոյ մշտախաղ ,
 Բղիւժր Աթուռն Անաստան :

ԵՐԴ Է.

ԳԱՂԹԱԿԱՆՔ

1. Արադս երբ ելար Բիւր Ահան Սարէն ,
 Արադս էր վաղեւ դաս մեր ետեւն ,
 Հերիք գմեց վարեւ Օտարին հողերը ,
 Ինչ կ'ուզեւ Արադս մեր սե Արեւն ,
 Արադս զուլալէ քու սրտոր ալիքը
 Ջուր տո՛ւր որ լուանք մեր արնատ Շապիկը :
2. Արադս էր կ'սղջրաս՝, ուղիղ է , կտասկ ,
 Ո՛վ ըզգեկ եհար 'ի տո՛ւր 'ի սրլար ,
 Ար/ւնով լցեց քու կուրծ կսկոնած ,
 Արադս մեղ սլտամէ քու կենաց կտակ ,
 Արադս զուլալէ քու սրտոր Ա/իւրը ,
 Ջուր տո՛ւր որ լուանք մեր արնատ վէրգերը :

ԱՐԱԳՈ

3. Ո՛հ իմ ջունչ կտրաւ հաղիւ Ձեզ հտտոյ ,
 Թաղէ՛ք ես ասեմ՝ — Խամուրոյ երոյ ,
 Գիտե՛ք այս Գիշերը ինչ սուգ զիս պատեց .
 Որ լարաւ աչքով Ձեր ետեւն անկոյ ,
 Ինչի՞ զիս մինակ թաղիք ու փախար ,
 Որ/ւն փոխեցիք զիմ Անմահ վշտակ :
4. Հարաւ զիս մաղեց , Հիւսիս զիս թաղեց ,
 Լուսին յԱմպ մտաւ զիմ սիրտ սրտորեց ,
 Իմ դանդաղը կտակեմ ջրերու թեւերը ,
 Թա՛ղ վերցուն տանին զղլլան Գեամեր ,
 Թա՛ղ անցնին ջրեն այն արնատ Դաշաւեր ,
 Ուր թաղին 'ի հող Հայ ազգի Քաջեր :

5. Հոգին հրեղէնը տարաւ Հողեղէն ,
 իմ ոսկի խնձորը խեց իմ ծոցէն ,
 իմ Սէրը կը թաղեմ Ծովերու խորերը ,
 Թո՛ղ լեզու ելնեն ահեղ Ալիքները ,
 Թո՛ղ ահանջ դնեն աւագուտ Ափերը ,
 Թո՛ղ լսեն ու լան տարերն ու ձորերը :
 6. Արեգ վերացաւ՝ Երկին թագը կապեց ,
 Իր հոգին հալաւ Բիւր Ակունք կապեց ,
 Թէ հուր հրդեհի զհնութիւն այրէ .
 Թո՛ղ հրեղէն Հեղեղը զիս վերցու տանէ ,
 Թո՛ղ շարժին Աստեղը , Թո՛ղ շնչեն Հողմեր ,
 Թո՛ղ լան և ողբան քարերն ու թփերը :
 7. Ո՞վ գիտէ , ո՞ր է Ակն Անմահութեան ,
 Զոր Մտք մահացուաց զայն գիտել րազման ,
 Ակն Անմահութեան և Բիւր բարութեան
 Միայն Վ.Ե.Ղ. Ե.Ա.Կ.Ն էր Աստուածն Հայկեան .
 Թո՛ղ թուեն Հիւղէք , Թո՛ղ մաղեն Բնութիւնը ,
 Միշտ անմահ Հոգիքը Սնեղ գէն կարդան :
 8. Արեգ լաց մաւ խորան ՆԱ ԷԻՆ ,
 կալաւ իր ստինքը . Սէ՛ր կարդաց հոգինը ,
 Հուր Սիրոյն ելաւ , Արեգն այրեցաւ ,
 Իր հոգին հալաւ Արագս դետն իջաւ ,
 Բիւր Ակունք եղան Արցունք իւր աչաց ,
 ԶԱճիւն ոսկերացն թափեցին յԱրածն :
 9. Խոնարհի Երկին , շողայ Սէր ԷԻՆ .
 Շնորհք բոլորեն զՏապան Արեգին .
 Ոսկեփայլ Ամպերն քօղեն զՍուր Սար ,
 Աղեղն հաշտութեան կապէ զԻւր կամար ,
 Անդ Երկին Երկիր Թո՛ղ գրկեն շիրար :

Թո՛ղ համբոյժ Թիրոյ տան Լոյսն ու խաւարը :

10. Սէր էին հեայ Արեգին Տապան .

Հոգին հրդեհէ զԱնթեղ Բնութեան .

Շող մաղէ զՀոգ , Հուր տեղայ Հրին

Հալէ զՀիւթ ու Նիւթ հրեղէն Քամին ,

Արուան ու Մօրուան Թո՛ղ գլեն հոսեն ,

Նոր երկին երկիր Թո՛ղ հալեն թափեն :

11. Գարուն թէ հասնի , թէ բացուին Սարերը ,

Թէ հարաւ չնչէ , թէ հալին ձները ,

Թէ Տապ Արեուն իջնայ 'ի հողերը ,

Թո՛ղ Ամուլ երկիր լուծէ իր կապերը ,

Թո՛ղ Սէրը անձրեւն , թո՛ղ եղնան Ամպերը ,

Թո՛ղ ծլին հողէն Հայկայ ոսկերները :

12. Արագս ողբաց ա՛նց — Արդ ինձ ի՞նչ մնաց ,

Ճգեց իր Շապիկը , իւր կուրծքն երեայ ,

Իւր փաղփիւնափայլ Ստինքն արնոտած ,

Եւ Սուրն եռաբարդ Նորա սիրտը վարսած ,

Տեսա՞ք ասաց լաց — Արագս լալաղին ,

Իւր սղտոր ալիքը յարիւն ծփացին :

ԲՈՂՈՒՔ

1. Ո՞ղ Նախախնամող ?

Բնութեան Աստուած

Եթէ չ'ես 'ի քուն ,

Լուր մեզ և հայեա՛ց .

Հերի՛ք Տէր փորձես ,

Հայք սիրեն զքեզ :

2. Հայք աղէկաուր

- Առ քեզ բողոքեն ,
 'ի բողոք արդար ,
 Ձքեզ խոյ ստիպեն ,
 Հերի՛ք Տէ՛ր փորձեա ,
 Հայք սիրեն զքեզ :
3. Հայք խօսին արձակ
 Յանձն 'ի Խիզճ վասն ,
 Դատ մեր ընդ ո՞ է ,
 Թո՞ղ Աստուած տեսցէ ,
 Հերի՛ք Տէ՛ր փորձեա ,
 Հայք սիրեն ըզքեզ :
4. Հայք ասեն 'ի վաղ
 Մեր զայն սրաշտէաք
 Չընութեանն Աստուած
 Վեհագոյն էակ .
 Հերի՛ք Տէ՛ր փորձեա ,
 Հայք սիրեն զքեզ :
5. Նախախնամ՝ էից
 'ի դատ անաշատ
 Չոր մեզ ուսուցին
 Լոյս և Բնութիւն .
 Հերի՛ք Տէ՛ր փորձեա ,
 Հայք սիրեն զքեզ :
6. Չի՛նչ է աշխարհս ,
 Եւ զի՛նչ կեանք Հոյին ,
 Սրդ հո՞ւր և արի՞ւն
 Ի Բաժին նորին .
 Հերի՛ք Տէ՛ք փորձեա ,
 Հայք սիրեն զքեզ :

7. Զորս դա՛րէ՛ չորս դա՛ր ,
 Զի անմիտութար
 Միշտ լա՛յ աշխարհէ՛
 Հայ Ազգն անդադար ,
 Հերի՛ք Տէր փորձես ,
 Հայք սիրեն դքեղ :
8. Զարմատ Հայ Ազգին
 Զերթ կանանչ ծառո՛յն ,
 Սղոցեաց կտրեաց
 Տապար Ոսոխին .
 Հերի՛ք Տէր փորձես ,
 Հայք սիրեն դքեղ :
9. Հայք ըզ Թագ Թողին ,
 ԶՍուլն անարգեցին ,
 Զսաստիչ Գաւաղանն
 Յաճխն թաղեցին .
 Հերի՛ք Տէ՛ր փորձես ,
 Հայք սիրեն դքեղ :
10. Հայք Ուխտ ուխտեցին .
 Տէ՛ր ըզքեղ սաշտել .
 • Սիրել ըզթշնամին ,
 Զարխն չհեղուի .
 Հերի՛ք Տէր փորձես ,
 Հայք սիրեն դքեղ :
11. Զուխտ քո պահեցար .
 Սուրբ մեր բթացան . . .
 Տէ՛ր Օտարք յարեան ,
 Կեանք մեր զո՛հ եղեն . . .
 Հերի՛ք Տէր փորձես ,

Հայք սիրեն ըզքեզ :
 11. Ո՛վ Տէր արդար ես ,
 Տէ՛ր գթա՛ 'ի մեզ . . .
 'ի քո սուրբ Հոգին
 Միացո՞ ըզ մեզ . . .
 Հերի՛ք Տէ՛ր փորձես ,
 Հայք սիրեն զքեզ :

Այն փոքրիկ Պատմութեան ետքէն զբռնած
երգերու մէջի Յատուկ անոնները տրամադիր
ենք մեր զբաբառ Հայ Դիցարանութեան միջո-
ցաւ բացատրել . զոր՝ առ ՚ի լնուլ զփափագ
Հայազն բանասիրաց , հանդերձեալ ենք աւար-
տել :

ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆ ՔԱՆԻ ԻՆՉ ԲԱՌԻՑ

- « Գլխաւոր » Ամուսին , այր կնոջ .
- « Հուրան ցուրան » ստուեր կամ չուքք լիբանց .
- « Խալ ձկունք » խայտ ձկունք .
- « Նոր Աղին » Աւան ինչ յԱպահուէիս .
- « Ակոն » ծոց , կամ աչք հովտաց .
- « Թեղի փայտ » ոստ թեղոջ ծառոյ .
- « Տուտ » ձեռքաբբ օձու .
- « Չիխան » մացառ , ծառ Չրինջի .
- « Դա է Աղին » Աւան ինչ ՚ի Բաղրաւանդ .
- « Բա՛լ բա՛լ » բո՛յլ բո՛յլ .
- « Կուցք » բուռն ձեռին .
- « Զուլալէ » սլարգէ , զտէ :